



# ՄՈՒՐԲ ԶԱԿՈՐ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Ե՛ ԿԵՂԵՅԻ



### ՏՈՒ ԵՐԵԿԱՆ ՄՈՒՐ ԽԱՉԻՆ

10 ՄԱՅԻՍ 2009

Կիրակնօրեայ ընթերցումներ	էջ 1
Մայրերու Օրուան Արարողութիւն	էջ 2
Հարիւրապետի Մառայիմ Բժշկութիւնը	էջ 5
Յիսուս Կը Բժշկէ	էջ 6
Ծանուցում	էջ 8

#### ԸՆԹԵՐՑՈՒՄ

«ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԵՐԸ»

ԳԻՐՔԷՆ

(17.1-15)

Ամփիպոլիս եւ Ապողոնիա քաղաքները շրջելէ ետք Պօղոս եւ Շիղա Թեսաղոնիկէ եկան ուր հրեաներու ժողովարան մը կար: Պօղոս ըստ իր սովորութեան ժողովարան գնաց, եւ երեք Շաբաթ օրեր անոնց քարոզեց: Կը բանար ու կը բացատրէր Գիրքերը, անոնցմով կ'ապացուցանէր թէ ի'նչպէս Քրիստոս պիտի չարչարուէր ու մեռելներէն յարուրուին առնէր, եւ կ'ըսէր. «Այն Յիսուսը զոր ես ձեզի կը քարոզեմ, ա'ն է Քրիստոսը, խոստացուած Փրկիչը»: Թեսաղոնիկեցիներէն ոմանք հաւատացին եւ Պօղոսի ու Շիղայի յարեցան: Նոյնպէս անոնց յարեցան շատ մը աստուածապաշտ յոյներ եւ նկատառելի թիւով երեւելի կիներ:

Հրեայ առաջնորդներ նախանձեցան, եւ փողոցներէն քանի մը դատարկապորտ անօրէններ հաւաքելով ամբոխ կազմեցին, ամբողջ քաղաքը խռովեցին եւ Յասոնի տան վրայ խուժեցին՝ Պօղոսն ու Շիղան բռնելու եւ ժողովուրդին առջեւ հանելու համար: Բայց երբ գանոնք չգտան, Յասոնն ու քանի մը ուրիշ հաւատացեալներ քաջեցին տարին քաղաքի իշխաններուն առջեւ, պոռալով. «Այն մարդիկը որոնք ամբողջ աշխարհը իրար անցուցին, հիմա մեր քաղաքը եկեր են, եւ Յասոն իր տունը առեր է զիրենք: Ասոնք բոլորը կայսեր օրէնքներուն հակառակ կը գործեն, որովհետեւ ուրիշ թագաւոր մը կը ճանչնան, Յիսուս անունով»: Այս խօսքերով անոնք խռովեցուցին ամբոխը եւ քաղաքի

իշխանները: Սակայն իշխանները Յասոնէն եւ միւս քրիստոնեաներէն երաշխաւորութիւն առնելով ազատ արձակեցին գանոնք:

Հազիւ գիշերը վրայ հասած, քրիստոնեաներ Բերիա զրկեցին Պօղոսն ու Շիղան, որոնք երբ հոն հասան՝ հրեաներու ժողովարանը գացին: Բերիայի հրեաները աւելի ազատամիտ էին քան Թեսաղոնիկեցիները, ուստի մեծ յօժարութեամբ ընդունեցին Աստուծոյ խօսքը եւ ամէն օր Գիրքերը կը քննէին, տեսնելու համար թէ ճշմարիտ են Պօղոսի քարոզածները: Անոնցմէ շատեր հաւատացին: Նմանապէս հաւատացին բազմաթիւ ազնուական յոյն կիներ եւ այրեր: Բայց երբ Թեսաղոնիկէի հրեաները իմացան թէ Պօղոս Բերիայի մէջ եւս Աստուծոյ խօսքը քարոզեց, հոն ալ եկան ժողովուրդը գրգռելու եւ խռովութիւն ստեղծելու համար: Ուստի հաւատացեալները անմիջապէս Պօղոսը մինչեւ ծովեզերք զրկեցին, իսկ Շիղա եւ Տիմոթէոս հոն մնացին: Պօղոսի ընկերացողները զինք մինչեւ Աթէնք հասցուցին եւ ապա Բերիա դարձան, Շիղայի եւ Տիմոթէոսի համար Պօղոսէն պատուէր առնելով որ շուտով գան իր մօտ:

#### ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ

(1.1-10)

Մենք լսեցինք, մեր աչքերով տեսանք եւ մեր ձեռքերով շօշափեցինք Որդին, Բանը, որ սկիզբէն իսկ կեանքի ստեղծիչն էր: Անիկա նոյնինքն կեանքն էր որ յայտնուեցաւ: Մենք տեսանք եւ կը վկայենք, ձեզի պատմելով անոր մասին, այսինքն յաւիտենական կեանքին մասին, որ Հօրը հետ էր եւ այժմ մեզի յայտնուեցաւ: Ինչ

Անիկա  
նոյնինքն  
կեանքն էր որ  
յայտնուեցաւ:

որ տեսանք ու լսեցինք կը պատմենք ձեզի, որպէսզի դուք ալ մասնակից դառնաք այն հաղորդակցութեան որ մենք ունինք Հօրը եւ անոր Որդւոյն Յիսուս Քրիստոսի հետ, եւ ձեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ: Ահա թէ ինչու կը գրենք ձեզի այս նամակը:

Պատգամը որ լսեցինք եւ ձեզի կը փոխանցենք, սա է՝ թէ Աստուած լոյս է. բնաւ խաւար չկայ անոր մէջ: Արդ, եթէ ըսենք “հաղորդակից ենք իրեն” եւ միւս կողմէ շարունակենք խաւարի մէջ ապրիլ, կը ստենք անհա եւ ճշմարտութեան դէմ կը գործենք: Իսկ եթէ Աստուծոյ լոյսին մէջ քալենք, ինչպէս

Աստուած լոյս է. բնաւ խաւար չկայ անոր մէջ:

ինք լոյսի մէջ է, այն ատեն ճշմարտապէս հաղորդակից կ'ըլլանք իրարու, եւ իր Որդւոյն Յիսուսի արիւնը կը սրբէ մեզ ամէն մեղքէ:

Եթէ ըսենք “մեղք չունինք”, մենք մեզ կը խաբենք եւ կը մերժենք ճշմարտութիւնը ընդունիլ: Իսկ եթէ խոստովանինք մեր մեղքերը, վստահ եղէք թէ Աստուած որ արդար է՝ պիտի ներէ մեր մեղքերը եւ մեզ պիտի սրբէ մեր բոլոր անիրաւութիւններէն: Եթէ “մեղք չգործեցինք” ըսենք, ստախոս կը հանենք զԱստուած, քանի իր խօսքը չենք ընդունիր:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ**

(7.14-24)

Տաղաւարահարաց տօնակատարութեան մօտաւորապէս կէսին, Յիսուս տաճար ելաւ եւ սկսաւ ուսուցանել: Հրեաներ կը զարմանային եւ կ'ըսէին.

«Ինչ որ ձեզի կ'ուսուցանեմ՝ իմ վարդապետութիւնն է, այլ անորը՝ որ զիս զրկեց:»

«Ինչպէ՞ս այս մարդը Սուրբ Գիրքերը գիտէ, երբ բնաւ չէ ուսած զանոնք»: Յիսուս պատասխանեց անոնց. «Ինչ որ ձեզի կ'ուսուցանեմ՝ իմ վարդապետութիւնն է, այլ անորը՝ որ զիս

զրկեց: Ով որ կ'ուզէ Աստուծոյ կամքը կատարել, պիտի հասկնայ թէ Աստուծո՞ւմ է այս վարդապետութիւնը, թէ ես ի՞մ հեղինակութեամբ կը խօսիմ: Ան որ իր հեղինակութեամբ կը խօսի՝ իր անձին համար փառք կը փնտռէ, իսկ ան որ զինք զրկողին փառքը կը փնտռէ, ճշմարիտ է եւ խաբէութիւն

չկայ անոր մէջ: Մովսէս ձեզի Օրէնքը չտուա՞ւ. սակայն ձեզմէ ոչ ոք կը հնազանդի Օրէնքին: Ինչո՞ւ կ'ուզէք զիս սպաննել»: Ժողովուրդը պատասխանեց. «Դիւահա՞ր ես, ի՞նչ ես. ո՞վ կ'ուզէ քեզ սպաննել»: Յիսուս պատասխանեց. «Հրաշք մը գործեցի եւ բոլորդ վրդովեք էք: Մովսէս հրահանգեց թլփատել ձեր զաւակները - թէեւ

Երեւոյթներէն մի՛ դատէք, այլ արդար դատաստան կատարեցէք»:»

Մովսէս չէր սկսողը, այլ ձեր նախահայրերը - եւ դուք ձեր զաւակները կը թլփատէք Շաբաթ օրով: Եթէ մէկը կը թլփատէք Շաբաթ օրով, որպէսզի չբեկանուի Մովսէսի Օրէնքը, ինչո՞ւ զայրացած էք ինծի դէմ, որովհետեւ մէկը ամբողջութեամբ բժշկեցի Շաբաթ օրով: Երեւոյթներէն մի՛ դատէք, այլ արդար դատաստան կատարեցէք»:»

**ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐՈՒԱՆ  
ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ**

Այս արարողութիւնը պատրաստուեցաւ անցեալ տարի Բարեշան Առաջնորդ՝ Գրշ. Տ. Խաժակ Արք. Յակոբեանի հրամանով, Արժ. Տ. Գառնիկ Քեհյ. Գոյունեանի կողմէ:

1  
(Եկեղեցական)  
Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.  
ամէն:

2  
(Դպիր)  
Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:  
Ընկա՛լ, կեցո՛՛ եւ ողորմեա՛:

3  
(Եկեղեցական)  
Օրհնութիւն եւ փառք  
Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ.  
այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից.  
ամէն:

4  
ՇԱՐԱԿԱՆ «ՄԵԾԱՅՈՒՍՅԷ» ԱԿ  
(Դարձուածք)  
Ով գերահրաշ ծաղիկ, բուրեղալ յեղեմայ հոտ  
անմահութեան ծննդոց Եւայի՛՛ յորմէ սփռեցաւ

մահ ընդ տիեզերս. Օրհնութեամբ ըզքեզ մեծացուցանեմք:

Դու լուծիչ երկանց, բարձող անիծից, ծագումն արեւու լուսոյն ճշմարտի, որով հերքեաւ խաւարն առաջին. Օրհնութեամբ ըզքեզ մեծացուցանեմք:

Ըզքեզ ունիմք բարեխօս կոյս անհարսնացեալ, մայր անարատ էմմանուէլի, տաճար Բանին Հօր Երկնաւորի. Օրհնութեամբ ըզքեզ մեծացուցանեմք:

\*\*\*\*\*

**ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ**

Ով գերահրաշ ծաղիկ, Եդեմէն անմահութեան բոյրը փչեցիր ծնունդներուն վրայ Եւայի, որմէ մահը տարածուեցաւ տիեզերքի մէջ. Քեզ օրհներգելով կը մեծարենք:

Դու տառապանք լուծողն ես, անէծք վերցնողը, ծագումնարանն ես Արեւուն՝ Ճշմարիտ Լոյսին, որով սկզբնական խաւարը փարատեցաւ. Քեզ օրհներգելով կը մեծարենք:

Քեզ բարեխօս ունինք, ո՛վ անհարսնացեալ կոյս, դու որ էմմանուէլին անարատ մայրն ես, տաճարն ես Երկնաւոր Հօր Բան Աստուծոյն. Քեզ օրհներգելով կը մեծարենք:

\*\*\*\*\*

5

**ԸՆԹԵՐՑՈՒՄ**

**ԹԱԳԱՒՈՐՆԵՐՈՒ ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔԷՆ**  
(Սամուէլ Մարգարէի Մօր՝ Աննայի Աղօթքէն)

*Իմ սիրտս Տիրոջմով ուրախացաւ,  
իմ անձս Տիրոջմով զօրացաւ:*

*Տիրոջ պէս սուրբ չկայ,  
որովհետեւ քեզմէ զատ ուրիշ մը չկայ,  
ու մեր Աստուծոյն պէս վէմ չկայ:*

*Ալ ասկէ ետք գոռոզութեամբ մի պարծենաք,  
ու ձեր բերնէն*

*ամբարտաւանութիւն թող չելլէ.  
քանզի Տէրը գիտութեան Աստուածն է,  
եւ Ան բոլորին գործը կը կշռէ:*

*Զօրաւորներուն աղեղները կոտրեցան  
ու տկարները զօրացան:*

*Ան աղքատը փողիին մէջէն կը վերցնէ  
եւ կարօտեալը աղբիւսէն կը հանէ,  
որպէսզի իշխաններուն հետ նստեցնէ  
ու փառքի աթոռը*

*անոնց ժառանգութիւնն տայ:*

*Երկրի հիմերը Տիրոջն են*

*ու աշխարհը անոնց վրայ հաստատեց:  
Ան իր սուրբերուն կեանքը կը պահպանէ,  
մինչ չարագործները  
մութին մէջ պիտի կորսուին...*

6

**ԸՆԹԵՐՑՈՒՄ**

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌ ՏԻՄՈԹԷՆՍ ԳՐԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԷՆ**

*Երախտապարտեմ Աստուծոյ, որուն կը ծառայեմ մաքուր խիղճով, ինչպէս իմ նախահայրերս ծառայած են. եւ գիշեր-ցերեկ աղօթքներուս մէջ անդադար կը յիշեմ քեզ, եւ կը փափաքիմ քեզ տեսնել – մանաւանդ երբ վերյիշեմ բաժանման պահուն թափած արցունքներդ – որպէսզի սիրտս ուրախութեամբ լեցուի: Կը մտաբերեմ այն անկեղծ հաւատքը որ քու մէջդ տեսայ. որ նախ մեծ մօրդ՝ Լաւողիկիայի եւ մօրդ՝ Եւնիկէի մէջ գտած էի, եւ համոզուած եմ որ քու մէջդ ալ կայ:*

*Այդ պատճառով ալ կը յիշեցնեմ քեզի, որ բոցավառ պահես այն շնորհքը որ Աստուած քեզի տուաւ՝ երբ քեզ ձեռնադրեցի: Որովհետեւ Աստուած իր Հոգին մեզի տուաւ՝ որպէսզի մեր վախկոտութիւնը յաղթահարենք եւ զօրանանք, սիրով լեցուինք եւ զգաստ կեանք վարենք:*

*Հետեւաբար, մի՛ վախնար մեր Տիրոջ մասին վկայութիւն տալու...:*

7

**ԸՆԹԵՐՑՈՒՄ**

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ**  
(Սուրբ Կոյսին Աղօթքը)

*Տէրը պիտի գովաբանեմ.  
ահա հոգիս կ'ուրախանայ Աստուծմով,  
իմ Փրկիչովս,*

*որովհետեւ ան տեսաւ  
իր աղախինին հեղութիւնը:*

*Ասկէ ետք բոլոր սերունդները  
երանի պիտի տան ինծի,*

*քանի հզօրն Աստուած ինծի համար  
մեծամեծ գործեր կատարեց.*

*սուրբ է անունը անոր:*

*Բոլոր ժամանակներուն մէջ ողորմութեամբ ան  
կը նայի աստուածավախ մարդոց վրայ:*

*Իր բազուկով ան զօրութիւն ցոյց տուաւ,  
ոչնչացուց հպարտները՝*

*իրենց բոլոր խորհուրդներով:*

*Գահազրկեց արքաները  
եւ բարձրացուց խոնարհները:*

8

**ՔԱՐՈԶ**

*Մայր սուրբ սքանչելի լուսոյն, որ գ Աստուածն  
ամենայն յաւիտեանց յորովայնի քում կրեցեր,  
եւ ցնծութիւն աշխարհի ծնար ըզբանն*

**Աստրւած. աղաչեմք:**

- Մայր սուրբ բարեխօսեա:

**Աղաչեա վասն մեր զառ ի քէն ըզմարմնացեալն Աստրւած, որ խոնարհեցաւ ի Հայրական ծոցոյ. քառ մարմին ըստ մարդկային բնութեանս՝ առնել խաղաղութիւն յերկինս եւ յերկրի. աղաչեմք:**

- Մայր սուրբ բարեխօսեա:

**Աղաչեա վասն մեր...: Ներել մեզ անտես առնել ըզյանցանս մեր. եւ տալ օգնականութիւն ընդդիմակաց լինիլ հակառակամարտիցն ի պատերազմի. աղաչեմք:**

- Մայր սուրբ բարեխօսեա:

**Աղաչեա վասն մեր...: Զի միաբանեսցէ գեղեղեցի իւր սուրբ, շինեալ ի վերայ հիման առաքելոց եւ մարգարէից. պահել անարատ մինչեւ յօր երեւելոյ գալստեան իւրոյ. աղաչեմք:**

- Մայր սուրբ բարեխօսեա:

**Աղաչեա վասն մեր սրբուհի, ըզմիածին քո զորդին. եւ վասն հոգւոցն հանգուցելոց՝ ընդունիլ յարքայութիւն երկնից, եւ տալ մասն եւ բաժին ընդ սուրբս ամենայն. աղաչեմք:**

- Յիշեա Տէր եւ ողորմեա:

**Եւ եւս առաւել գյորդորումն սիրոյ, եւ զգործըս բարեաց պարգեւել մեզ խնդրեմք:**

- Տուր մեզ Տէր Աստրւած:

**Զանձինքս մեր եւ ըզմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն առասցուք: - Քեզ Տեառնդ յանձն եղիցուք: Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ: - Տէր, ողորմեա. Տէր, ողորմեա. լո՛ւր Տէր եւ ողորմեա:**

\*\*\*\*\*

**ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻԻՆ**

Սփանչելի Լոյսին, ո՛վ սուրբ մայր, որ յաւիտեանական Աստուածը որովայնիդ մէջ կրեցիր, եւ աշխարհին իբր ցնծութիւն ծնար Աստուած Բանը. կ'աղաչեմք:

- Մայր սուրբ բարեխօսե՛:

Մեզի համար աղաչէ մարմնացեալ Աստուծոյ, որ Հայրական ծոցէն խոնարհեցաւ, ըստ մարդկային բնութեան մարմին առաւ, որպէսզի երկինքի խաղաղութիւնը նաեւ երկրի վրայ հաստատէ. կ'աղաչեմք:

- Մայր սուրբ բարեխօսե՛:

Մեզի համար աղաչէ մարմնացեալ Աստուծոյ, որպէսզի ներէ եւ նկատի չառնէ մեր յանցանքները, եւ օգնէ՝ որպէսզի կարենանք պատերազմի ընթացքին

հակառակամարտներուն դիմադրել. կ'աղաչեմք:

- Մայր սուրբ բարեխօսե՛:

Մեզի համար աղաչէ մարմնացեալ Աստուծոյ, որպէսզի միաբան դառնայ իր սուրբ Եկեղեցին, որ շինուած է առաքելներու եւ մարգարէներու հիման վրայ. եւ որպէսզի մինչեւ իր գալստեան օրուայ յայտնուիլը՝ անարատ պահէ մեզ. կ'աղաչեմք:

- Մայր սուրբ բարեխօսե՛:

Մեզի համար աղաչէ, ո՛վ սրբուհի, միամօր գաւկիդ. նաեւ՝ հանգուցեալ հոգիներուն համար, որպէսզի արժանի տեսնէ երկինքի արքայութեան մէջ ընդունելու, եւ բոլոր սուրբներուն հետ արքայութեան մասնակից դարձնելու:

- Յիշէ՛, Տէր, եւ ողորմէ՛:

Եւ որպէսզի սիրոյ մէջ տոկալու քաջութիւնը, եւ բարի գործեր կատարելու պարգեւը աւելցնէ. կը խնդրեմք:

- Տուր մեզի, Տէր Աստուած:

Մեր անձերը եւ զիրար Ամենակալ Տէր Աստուծոյ յանձնեմք:

- Քեզի՛ Տիրոջդ կը յանձնուիմք:

Ողորմէ մեզի, Տէր Աստուած մեր, ըստ բոլոր մեծ ողորմութեանդ. ամէնքս միաբանութեամբ ըսեմք.

- Տէր, ողորմէ՛. Տէր, ողորմէ՛. լսէ՛, Տէր, եւ ողորմէ՛:

\*\*\*\*\*

**ԱՂՕԹՔ ԸՍՏ ՆԱՐԵԿԻ 80.1-ԻՆ**

Սուրբ Աստուածածին, հրեշտակ՝ մարդոցմէ, մարմնատեսիլ քերովբէ, երկնաւոր թագուհի, անխառն՝ ինչպէս օդը, մաքուր՝ ինչպէս լոյսը, անեղծ՝ երկնածեմ արուսեակին պէս, գերազանց քան անկոխելի սրբութիւն սրբութեանցը, դուն՝ երանական խոստումին տեղը, շնչաւոր եղեմը, անմահ կեանքի ծառը՝ բոցեղէն սուրով շրջապատուած, բարձրեալ Հօրմէն զօրացած եւ հովանաւորուած, Հոգիին հանգչումովը պատրաստուած եւ մաքրագործուած, Որդիին բնակութեամբը յարդարուած եւ տաղաւարուած, Անոր՝ Հօր Միածինը՝ քու անդրանիկդ, ծնունդով քու Որդիդ է, իսկ արարչութեամբ՝ Տէր: Անաղտ մաքրութեանդ հետ՝ նոյն ատեն անբիծ բարի, անարատ սրբութեանդ հետ՝ խնամակալ բարեխօս: Ընդունէ՛ դաւանողներուս այս մաղթանքն ու աղօթքը եւ զանոնք խառնէ քու պաղատանքներուդ: Հիւսէ՛, միացո՛ւր մեր մեղաւորի դառն հեծութիւնները քու երջանիկ ու խնկաւորուած հայցուածներուդ, ո՛վ տունկ կեանքի օրհնուած պտուղին. որպէսզի քեզմէ միշտ օգնեալ եւ բարեգործեալ, քու մաքրական ծնելութեանդ ապաւինած եւ անով լուսաւորուած, ապրինք քու Տիրոջդ եւ Զաւակիդ՝ Բրիստոսի համար:

10  
ՔԱՐՈՉ

Սուրբ Աստուածածնին եւ բոլոր սուրբերուն դիմենք, որպէսզի մեզի համար բարեխօսեն Հօր քով, որ երկինքն է, որպէսզի Ան ողորմի մեզի, եւ գթալով փրկէ մեզ՝ իր ստեղծածները:

11  
ՄԱՂԹԱՆՔ  
(Եկեղեցական)

Տէր, ընդունէ՛ մեր աղաչանքները՝ Սուրբ Աստուածածնին, քու Միածին Որդիիդ անարատ ծնողին բարեխօսութեամբ, եւ խնդրանքովը բոլոր սուրբերուն. եւ այսօրուան յատուկ շնորհքովը: Լսէ՛ մեզ, Տէր, եւ ողորմէ՛ մեզի: Ներէ՛, քաւէ՛, եւ թողութիւն շնորհէ մեր մեղքերուն: Արժանի ըրէ՛ գոհ սրտով փառաւորելու քեզ, Որդիիդ եւ Սուրբ Հոգիիդ հետ միասին. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ  
ՄԱՏԹԷՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

ՀԵՌԵԱԿ՝ ՉԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱԲՈՐԵԱՆ  
ԽԱՐԱԳՐ՝ ԳՆՈՒԿ Ք. Գ.

Ը

**ՀԱՐԻՐԱՊԵՏԻ ԾԱՌԱՅԻՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ (5-13):**

«Երբ Յիսուս Կափառնաում մտաւ, իրեն մօտեցաւ Հռոմայեցի հարիւրապետ մը, որ կ'աղաչէր ըսելով.

- Տէ՛ր, ծառաս տունը անդամալոյժ վիճակի մէջ է եւ սաստիկ կը տառապի:

Յիսուս ըսաւ.

- Ես կու գամ ու կը բժշկեմ գայն:

Հարիւրապետը պատասխանեց.

- Տէ՛ր, ես արժանի չեմ քեզ իմ յարկիս տակ ընդունելու. միայն բան մը ըսէ, եւ ծառաս պիտի առողջանայ: Որովհետեւ ես ալ, որպէս իշխանութեան ենթակայ մարդ, ձեռքի տակ գիւտարներ ունիմ. մէկուն կ'ըսեմ՝ Գնա, եւ կ'երթայ, ուրիշի մը կ'ըսեմ՝ Եկու՛ր, եւ կու գայ. ծառայիս կ'ըսեմ՝ Այս բանը ըրէ, եւ կը կատարէ:

Յիսուս երբ լսեց, հիացաւ եւ իր հետեւորդներուն ըսաւ.

- Կ'ըսեմ ձեզի, թէ նոյնիսկ Իսրայէլի մէջ այսպիսի հաւատք ունեցող մը չգտայ: Գիտցէ՛ք նաեւ, թէ շատեր արեւլէն ու արեւմուտէն պիտի գան եւ երկինքի արքայութեան մէջ սեղան պիտի բազմին Աքրահամի, Իսահակի եւ Յակոբի հետ, իսկ անոնք որոնք երկինքի արքայութեան ժառանգորդները պէտք է ըլլային՝ դուրսը խաւարին մէջ պիտի նետուին, ուր պիտի լան եւ ակոսները կրնան:

Յետոյ Յիսուս հարիւրապետին ըսաւ.

- Գնա՛, ինչպէս որ հաւատացիր՝ այդպէս թող ըլլայ քեզի:

Եւ նոյն վայրկեանին հարիւրապետին ծառան բժշկուեցաւ:»

Այս դրուագը հարստագոյն դրուագներէն մէկն է,

եթէ ուզենք անշուշտ զայն մանրամասնօրէն առնել եւ բանալ:

Հռոմայեցի հարիւրապետ մըն է, որ Յիսուսի կու գայ եւ իր ծառային համար բժշկութիւն կ'աղերսէ: Ան հեթանոս մըն էր: Թէ ի՞նչ պատկերացում ունէր Յիսուսի մասին չենք գիտեր: Անկասկած կը վստահէր անոր հրաշագործ կարողութեան:

Հարց մը կայ այստեղ: Հարիւրապետը արդեօ՞ք իր ծառային համար բժշկութիւն կ'աղերսէ: Մեզի համար յստակ չէ այս պարագան: Որովհետեւ այն բառը որ բնագրին մէջ կը գործածուի (փայս), կրնայ նշանակել թէ՛ ծառայ եւ թէ՛ գաւակ: Արդեօք ո՞ր մէկը հասկնանք:

Նկատի ունենալով աղաչական այն կերպը, որով հեթանոս այս մարդը կը դիմէ Յիսուսի, կը մտածենք որ հարիւրապետ մը ինչո՞ւ իր ծառային համար պիտի գար Յիսուսի եւ աղերսէր: Արդեօ՞ք իր գաւակին համար չէր, որ ան այնքան տագնապով եկած էր Յիսուսի մօտ: Անշուշտ ծառայ մըն ալ իր կարգին կրնայ շատ սիրելի ըլլալ: Բայց առաւել հաւանականը այն է, որ հարիւրապետին աղերսանքը վերաբերած ըլլար իր գաւակին քան ծառայի մը: Ուշագրաւ է, որ Յովհաննէսի աւետարանին մէջ նոյն դրուագին տարբերակը գաւակի մը բժշկութեան մասին է (ՅՆ 4.46-53):

Հետաքրքրական է Յիսուսի պատասխանը: Յիսուս անմիջական պատրաստակամութիւն մը կը յայտնէ հարիւրապետին տունը երթալու եւ բժշկելու:

Պահ մը նկատի ունեցէ՛ք, որ այն օրերու հրեայ մը երեք պէտք չէ որ հեթանոսի մը հետ կապ ունենար: Հեթանոսի մը տունը պէտք չէ մտնել եւ անոր հետ ո՛չ ճաշի նստէր, ո՛չ ձեռնուէր կամ որեւէ յարաբերութիւն ունենար: Յիսուսի շուրջ մարդիկ կ'ըլլային, եւ անոնց մէջ ալ՝ երբեմն Փարիսեցիներ եւ Օրէնքի ուսուցիչներ, որոնք կը սպասէին որ Յիսուս իրենց սովորութիւններէն տարբեր բան մը ըսէր, որպէսզի զինք մեղադրէին: Հակառակ ասոր, Յիսուս կ'ըսէ. «Ես կու գամ եւ կը բժշկեմ գայն»:

Օրինակ մը տալու համար այն հաստատուծիս, թէ հրեաներուն արգիլուած էր հեթանոսներուն հետ որեւէ յարաբերութիւն ունենալ, կը յիշեցնեմ ձեզի Առաքեալներուն Գործերը գիրքին այն դրուագը, ուր Պետրոս առաքեալ երբ Աստուծոյ կողմէ կը զրկուի Կոռնելիոս անունով հարիւրապետին տունը, այնտեղ նախ չբմեղանքով կ'ըսէ. «Դուք շատ լաւ գիտէք, թէ հրեայի մը արտօնուած չէ շփում կամ յարաբերութիւն ունենալ օտարագրի մը հետ: Բայց Աստուած ինձի ցոյց տուաւ, որ ոեւէ մէկը պիղծ կամ անմաքուր պէտք չէ համարեմ: Ուստի, երբ ետեւէս մարդ զրկեցիք՝ ելայ եկայ առանց առարկելու» (Գրծ 10.27-29): Ապա երբ Կեսարիայէն Երուսաղէմ կը վերադառնայ եւ կը գեկուցէ տեղոյն եկեղեցիին, նոյն չբմեղանքը կ'ընէ, ըսելով թէ Աստուած իրեն պատուիրած է խտրութիւն չզննել մարդոց միջեւ (տե՛ս Գրծ 11.2-18):

Արդ, հարիւրապետին դրուագով Յիսուս առաջին օրինակը կու տայ այդ խտրութիւնը չզննելու: Թէպէտ իր փրկագործական առաքելութիւնը ժամանակաւոր կերպով ուղղուած չէր հեթանոսներուն, բայց

միաժամանակ հեթանոսներու կողմէ հաւատքով կատարուած որեւէ դիմում երբեք չմերժեց:

Յիսուս իր ժամանակի մտայնութենէն անդին անցնելու քաջութիւնն է, որ ցոյց կու տայ: Յեղափոխական կեցուածք մը կը ցուցաբերէ՝ Աստուծոյ բոլորին համար անխտրական սէրը յայտնելու:

Նոյնքան հետաքրքրական է տեսնել, որ հարիւրապետը հակառակ իր դիրքին եւ պաշտօնին, ծայրայեղ համեստութեամբ եւ խոնարհութեամբ կ'ըսէ. «Տէ՛ր, ես արժանի չեմ քեզ իմ յարկիս տակ ընդունելու. միայն բան մը ըսէ, եւ ծառաս պիտի առողջանայ»:

Ան կ'ըսէ. «Ես ալ, որպէս իշխանութեան ենթակայ մարդ, ձեռքիս տակ զինուորներ ունիմ. մէկուն կ'ըսեմ՝ Գնա՛, եւ կ'երթայ, ուրիշի մը կ'ըսեմ՝ Եկո՛ւր, եւ կու գայ. ծառայիս կ'ըսեմ՝ Այս բանը ըրէ, եւ կը կատարէ»: Ըսել կ'ուզէ թէ՛ Դուն ալ իշխանութիւն ունիս՝ հրահանգէ եւ հիւանդութիւնն ու ցաւը վայրկեանին կ'անցնին:

Յիսուս շուտով իր վկայութիւնը կու տայ թէ՛ «նոյնիսկ Իսրայէլի մէջ յայպիսի հաւատք ունեցող մը չգտայ»: Արդեօք ի՞նչ ըսել կ'ուզէր Յիսուս: Այդպիսի հաւատք ունեցող երբեք չկա՞ր իր ժամանակի մարդոց մէջ: Կամ իր աշակերտները այդպիսի հաւատք չունէի՞ն:

Յիսուս երբ կը գովէ այդ հաւատքը, ըսել չ'ուզէր, թէ Իսրայէլի մէջ իրապէս այդպիսի հաւատք ունեցող չկար: Խօսքի հռետորական կերպ մըն է: Վստահաբար այդպիսի հաւատք ունեցողներ կային:

Քանի կային, ուրեմն ինչո՞ւ Յիսուս ուզեց այս վկայութիւնը տալ: Արդեօք ի՞նչ ըսել կ'ուզէր իր շրջապատին:

Բայց այս հարցումին պատասխանելէ առաջ, յստակացնենք թէ Յիսուսի գովասանքը հարիւրապետին բացարձակ վստահութեան կամ գորեղ հաւատքին կը վերաբերէր: Ապա գովասանքի այդ կերպով՝

- Նախ, նոյն հաւատքին տարածումը կը պահանջէր: Կ'ուզէր, որ իր ժողովուրդն ալ նոյն բացարձակ վստահութիւնը եւ գորեղ հաւատքը ունենար:

- Եւ երկրորդ, ճշմարտութիւն մըն ալ կը յայտնէր, թէ ճշմարիտ Աստուծոյ հաւատացողները միայն հրեաներ չեն, այլ ուրիշ ժողովուրդներուն մէջ ալ կան պիտի ծնին ճշմարիտ հաւատացեալներ:

Իր խօսքին շարունակութեան մէջ Յիսուս ըսած է. «Հատեր արեւելքէն ու արեւմուտքէն պիտի գան եւ երկինքի արքայութեան մէջ սեղան պիտի բազմին Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի հետ, իսկ անոնք որոնք երկինքի արքայութեան ժառանգորդները պէտք էր ըլլային՝ դուրսը խաւարին մէջ պիտի նետուին, ուր պիտի լան եւ ակռաները կը ճտեն»: Ասիկա կը յայտնէ, թէ հաւատքը որ ունէր հարիւրապետը ճշմարիտ էր: Եւ նոյն հաւատքը համաշխարհային տարողութիւն պիտի ունենայ, այլ խօսքով՝ ճշմարիտ Աստուծոյ վրայ հաւատքը մարդկութեան մէջ պիտի տարածուի եւ պիտի ըլլայ առիթ ոչ-հրեաներու ալ փրկութեան:

Յիսուս կը յստակացնէ, թէ Իսրայէլի ժողովուրդը կոչումը ունէր գորեղ հաւատք ունենալու, սակայն չունեցաւ: Մինչ գորութեան պէս «երկինքի արքայութեան ժառանգորդներ» ու ժողովուրդն էր ան,

բայց իրեն տրուած շնորհքը չստանձնեց: Աստուած ուզեց իր արքայութեան մէջ բազմեցնել զայն, սակայն ան մերժեց ընդունիլ Աստուծոյ շնորհքը: Իսրայէլի ժողովուրդը ինքզինք շատ իմաստուն կարծեց եւ զրկուեցաւ երկինքի արքայութենէն:

Ինչո՞ւ համար հարիւրապետը ինքզինք անարժան կը համարէ, որ Յիսուս իր տունը մտնէ:

Ան գիտէր, որ ինք արդար մէկը չէր:

Հարիւրապետը իբր զինուորական ըստ հին ժամանակներու սովորութեան՝ կամայ ակամայ բազմաթիւ անարդարութիւններ գործած էր հաւանաբար: Ուստի գիտակից էր իր անցեալին եւ ինքզինք բնականօրէն անարժան կը տեսնէր:

Իսկ ի՞նչ կը նշանակէ «դուրսը խաւարին մէջ պիտի նետուին, ուր պիտի լան եւ ակռաները կը ճտեն» խօսքը:

Արքայութիւնը Յիսուսի այստեղ տրուած պատկերացումին մէջ կը ներկայանայ իբր վայր մը կամ վիճակ մը, ուր մտնողները լոյսի մէջ են, մինչ անոնք որ դուրսը կը մնան՝ խաւարի մէջ կ'ըլլան: Ներսը եզոզները ուրախութեան վիճակ մը կ'ապրին, մինչդեռ դուրսը եզոզները կու լան եւ իրենց ակռաները կը կը ճտեն:

Իսկ Յիսուսի ընդհանուր պատկերացումները նկատի ունենալով, արքայութիւնը մենք կը հասկնանք իբր երանական այն վիճակը, որուն պիտի արժանանան Աստուծոյ կոչին անսացողները: Անոնք Աստուծոյ ներկայութեան խնճոյքը պիտի վայելեն եւ ցնծան:

Դուրս նետուածները ո՞ւր է, որ կը մնան: Եւ ինչպէս հասկնալ լալու եւ ակռաներ կը ճտելու փոխաբերութիւնը:

Ասիկա ինքզինքին դէմ զայրանալու պատկերաւոր արտայայտութիւն է: Յիսուս ըսել կ'ուզէ, թէ անոնք որ դուրսը պիտի նետուին, շատ ահաւոր եւ մնայուն կերպով պիտի զգան ուրախութեան վիճակէն իրենց զրկուածութիւնը:

**ՅԻՍՈՒՍ ԿԸ ԲԺՇԿԷ (14-17):**

«Ապա Յիսուս եկաւ Պետրոսի տունը, եւ տեսաւ որ անոր գոմանը հիւանդ պառկած էր՝ տախտիկան պատնասով: Յիսուս բռնեց անոր ձեռքէն, եւ տախտիկանը անցաւ: Անիկա ուրիշ ելլելով սկսաւ սպասարկել իրեն:

Երբ երեկոյ եղաւ, Յիսուսի բերին բազմաթիւ դիւահարներ: Յիսուս իր խօսքով չար ոգիները դուրս հանեց եւ բոլոր հիւանդները բժշկեց, որպէսզի իրակամանայ Եսայի մարգարէի բերնով ըսուածը.

Անիկա մեր հիւանդութիւնները վերցուց եւ մեր ցաւերը փարատեց»:

Այս հատուածը բժշկութեան պարզուկ պատմութիւն մըն է:

Աւետարանիչը շատ կարեւոր մէջբերում մը կը կատարէ՝ մեր ուշադրութեան բան մը յանձնելու համար:

Նախ, եթէ կ'ուզէք, անցողակի ձեւով ըսենք, թէ Պետրոս առաքեալ ամուսնացած էր:

Առաքեալները կարծէք թէ ընդհանրապէս ամուսնացած էին: Միայն Յովհաննէս չէր ամուսնացած:

Բոլորին մասին առանձին առանձին վկայութիւն չունինք: Բայց Ա. Կորնթացիներու 9-րդ գլուխին մէջ Պողոս առաքեալի խօսքը, թէ առաքեալները

իրաւունք ունին իրենց հաւատակից կիւր իրենց հետ շրջեցնելու (հմտ Ա. Կր 9.5), կը թելադրէ որ անոնք ամուսնացած էին:

Վաղ եկեղեցւոյ ղեկավարութեան մէջ, ամուսնութիւնը երբեք ալ բացարձակ վիճակ չէր: Յետոյ է, որ եկեղեցւոյ կարգերուն մէջ ամուսնի եկեղեցականութիւնը դարձաւ վերին ղեկավար դասը: Սակայն ասիկա ըսել չէ, թէ ամուսնութիւնը յաւերժական պայման է եկեղեցւոյ ղեկավարութեան համար: Մեր եկեղեցին ունի թէ՛ ամուսնի եկեղեցականութիւն եւ թէ՛ ամուսնացեալ. անոնց առաքելութիւնն է հոգեւոր առաջնորդութիւն կատարել:

Յիսուս, ուրեմն, կը բժշկէ Պետրոս առաքեալի գոքանչը, որ ոտքի ելլելով կը սկսի սպասարկել:

Յաջորդ համարը կ'ըսէ, թէ երբ երեկոյ եղաւ, Յիսուսի բազմաթիւ դիւահարներ բերին: Ինչո՞ւ մարդիկ սպասեցին եւ երեկոյեան բերին զանոնք:

Երբ նոյն դրուագին Մարկոսեան եւ Ղուկասեան տարբերակները կը կարդանք, այնտեղ աւելի յստակ կը դառնայ ըստածը: Կը տեսնենք, որ դիւահարներուն բերուած օրը Շաբաթ էր:

Այդ է պատճառը, որ մարդիկ սպասեցին երեկոյ ըլլալը, եւ ապա Յիսուսի բերեն դիւահարները: Ինչպէս գիտէք, Շաբաթ օրով հրեաներուն արգելուած էր որեւէ գործ ընել: Հիւանդ մը կրել, շալկել տանիլը գործ կը համարուէր, ուստի չէին կրնար Շաբաթ ցերեկին հիւանդներ բերել:

Եւ Յիսուս զանոնք բժշկեց:

Յիսուս իր բժշկութիւններուն մեծ մասը Շաբաթ օր կատարած է: Ինչո՞ւ:

Շաբաթ օրը բժշկութիւն ընելը հրէական օրէնքով արգելուած էր: Բայց Յիսուս Շաբաթ օրով բժշկութիւն կ'ընէր:

Յիսուս անշուշտ օրերուն միջեւ խտրութիւն դնողը չէր, եւ կրնար որեւէ օր բժշկութեան բարեգործութիւնը ընել: Հետեւաբար Շաբաթ օրով իր կատարած բժշկութիւնները այլ հարց մը կը դնեն:

Աւելորդ է ըսել, թէ Յիսուս Օրէնքը խախտելու դիտում չունէր: Ան երբեք Օրէնքը չխախտեց եւ չուզեց, որ մէկը խախտէ: Այլ ընդհակառակը միշտ ուզեց, որ Օրէնքը յարգուի: Սակայն նոյն ատեն Օրէնքին բուն միտքը ուզեց յայտնել:

Աստուած Շաբաթ օրով ի՞նչ կը կամենայ, որ մենք ընենք: Բարի՞ գործ մը, թէ չար գործ մը: Պարզ է, որ բարի գործ մը կատարելը կ'ուզէ: Մն 2.3-ի մէջ կը կարդանք, թէ Աստուած եօթներորդ օրը սրբեց:

«Սրբել» կը նշանակէ՝ այդ օրը որոշ նպատակի մը յատկացնել:

Ի՞նչ է եօթներորդ օրուան նպատակը:

ԶԱստուած փառաբանել:

Ի՞նչ է Աստուծոյ փառաբանութիւնը:

Անիկա միայն խօսք չէ: Նաեւ գործ է: Բարեգործութիւնը գԱստուած փառաբանելու այլ կերպ մըն է: Հետեւաբար, Շաբաթ օրով բարիք գործել կը նշանակէ՝ օրը ծառայեցնել Աստուծոյ սահմանած բուն նպատակին:

Շաբաթ օրը Աստուծոյ հանգիստի օրն է: Բայց ի՞նչ կը նշանակէ անիկա:

Եթէ բանանք Յայտնութեան գիրքը, վերջնութեւ, այսինքն 21-րդ գլուխին մէջ Աստուծոյ արքայութիւնը կը պատկերացուի, եւ ատով կը պարզուի, թէ Աստուծոյ հանգիստ կոչուածը ի՞նչ է:

4-րդ համարին մէջ կը կարդանք. «Անոնց աչքերէն ամէն արցունք պիտի սրբէ. այլեւս ո՛չ մահ գոյութիւն պիտի ունենայ, ո՛չ սուգ, ո՛չ ողբ, ո՛չ ցաւ եւ ո՛չ ալ յոգնութիւն»: Այս համարը մեզի ցոյց կու տայ Շաբաթ օրուան վախճանաբանական հասկացողութիւնը: Ապա՝ աւելի անդին գրուած է. «Քաղաքը լուսաւորուելու համար պէտք չունէր արեւու եւ լուսինի, որովհետեւ Աստուծոյ փառքը ի՛նք կը լուսաւորէ զայն, եւ անոր ճրագը Գառնուկն էր: Ժողովուրդները անոր լոյսով պիտի առաջնորդուին» (Յյտ 21.22-24):

Յիսուս իր բժշկութիւնները Շաբաթ օրուան կապելով, կ'ուզէ հասկցնել, թէ երբ Աստուծոյ վախճանական հանգիստը գայ, այն ատեն պիտի տիրէ կատարեալ առողջութիւն, ու կեանքը Գառնուկին լոյսով պիտի առաջնորդուի, այսինքն՝ Քրիստոսի:

Հետեւաբար, Յիսուս նախ կ'ուզէ Շաբաթին ճշգրիտ հասկացողութիւնը սորվեցնել, եւ երկրորդ՝ ցոյց տալ որ Շաբաթը, այսինքն՝ Աստուծոյ հանգիստին խորհրդանշանը, ինչպիսին պիտի ըլլայ ապագային:

Կարելոր է անդրադառնալ նաեւ այն երեւոյթին, որ Յիսուս իր հրաշքները կը կատարէր իր խօսքով:

Ինչպէ՞ս հասկնալ հրաշքներուն կատարումը խօսքով:

Ինք, ինչպէս Յովհաննէս աւետարանիչ ըսած է, Աստուծոյ խօսքն էր:

Ստեղծագործութեան սկիզբը Աստուած ամէն ինչ արարեց իր խօսքով: Եւ Յովհաննէս աւետարանիչ իր կարգին խոստովանութեամբ կը յայտարարէ, թէ ամէն ինչ իրմով եղաւ (ՅՅ 1.3):

Հրաշքներուն կատարումը խօսքով մեզի կը յիշեցնէ մէկ բան: Անոնք որ առաքելական նամակները կարդացած են, գիտեն որ Պօղոս առաքեալ Քրիստոսի ամբողջ փրկագործութիւնը կը տեսնէ իբր նոր ստեղծագործութիւն մը: Հին ստեղծագործութեան դիմաց՝ նոր կամ հոգեւոր ստեղծագործութիւն մը: Անցեալին՝ Աստուած իր խօսքով ստեղծեց տիեզերքը: Բայց իր Որդիին գալուստով՝ Աստուած կը վերստեղծէ այն ինչ որ չարը մարդուն հոգիին մէջ քանդեց եւ պատճառ եղաւ թէ՛ մարդուն եւ թէ՛ ստեղծագործութեան անկումին: Այս նոր ստեղծագործութիւնը Աստուած դարձեալ իր խօսքով՝ մարմնացեալ Բան Աստուծոմով կ'իրագործէ:

Մեղքին պատճառով անկեալ եւ հինցած ստեղծագործութիւնը՝ Քրիստոսի շնորհիւ կը նորոգուի կամ նոր ստեղծագործութիւն կ'ըլլայ:

Եզրակացնելով. Մատթէոս աւետարանիչ մէջբերելով Եսայի մարգարէին խօսքը թէ՛ «Անիկա մեր հիւանդութիւնները վերցուց եւ մեր ցաւերը փարատեց», Յիսուսի կատարած բժշկութիւններուն մէջ կը տեսնէ կատարումը Աստուծոյ խոստումին, կամ՝ իրականացման ընթացքը նոր ստեղծագործութեան, որ իր լրումին պիտի հասնի աշխարհի վախճանին:

(Շարունակելի 33)

## ԵՐԵՍՆՈՐԵԱԿ

Երեբժար, 12 Մայրս 2009

19.00 Երիտասարդական զրոյց՝  
«Ուխտատէղիներ եւ Սրբավայրեր»

Հրագար, 14 Մայրս 2009

11.00 Աղօթածողով՝  
Քոյրերու ժողով

12.00 Մայրերու օրուայ ճաշկերոյթ

Կրուար, 17 Մայրս 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Հրագար, 21 Մայրս 2009

**ՀԱՄԱՐՁՈՒՄ**

11.00 Ս. Պատարագ

Ուրբաթ, 22 Մայրս 2009

10.00 Հոգեգալստեան աղօթածողով՝  
Քոյրերու ժողով

Շաբաթ, 23 Մայրս 2009

10.00 Հոգեգալստեան աղօթածողով՝  
Քոյրերու ժողով

Կրուար, 24 Մայրս 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Երուուար, 25 Մայրս 2009

10.00 Հոգեգալստեան աղօթածողով՝  
Քոյրերու ժողով

Երեբժար, 26 Մայրս 2009

10.00 Հոգեգալստեան աղօթածողով՝  
Քոյրերու ժողով

19.00 Ֆիլմի ցուցադրութիւն՝  
“The Exorcism of Emily Rose”

Չորեբժար, 27 Մայրս 2009

10.00 Հոգեգալստեան աղօթածողով՝  
Քոյրերու ժողով

Հրագար, 28 Մայրս 2009

11.00 Հոգեգալստեան աղօթածողով՝  
Քոյրերու ժողով

Ուրբաթ, 29 Մայրս 2009

10.00 Հոգեգալստեան աղօթածողով՝  
Քոյրերու ժողով

Շաբաթ, 30 Մայրս 2009

10.00 Հոգեգալստեան աղօթածողով՝  
Քոյրերու ժողով

Կրուար, 31 Մայրս 2009

**ՀՈԳԵԳԱԼՈՒՄՍ**

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Հրագար, 04 Յուլիս 2009

11.00 Աղօթածողով՝  
Քոյրերու ժողով

Կրուար, 07 Յուլիս 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

ԵՐԵՍԱՄԱՐԴԱԿԱՆ  
ՆԵՐԿԱՅՅՈՒՄ ԵՒ ԶՐՈՅԺ

## «ՈՒՍՏԱՏԵՂԻՆԵՐ ԵՒ ՍՐԲԱՎԱՅՐԵՐ»

Երեբժարի 12 Մայիս 2009, ժամը 19.00  
հոգարարձութեան սենեակ

## ՏՆՕՐՀՆԷՔ

Տնօրհներ փափարող  
ընտանիքները,  
թող բարեհաճին դիմել  
Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանի,  
հեռաձայնելով 514 331 5445 x203  
թիւին,  
կամ՝ 514 909 5203 թիւին:

Հոգեհաւատեան ՁԵՐ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՆԽՕՐՕՔ  
ԿԱՏԱՐԵՅԷՔ ԿԱՊՈՒԵԼՈՎ  
ԵԿԵՂԵՅՈՅ ԴԻՒԱՆԱՏՈՒՄ

Սոյն թերթիւն ե-առաւարկ ստանալու  
ՀԱՄԱՐ ՁԵՐ Ե-ՀԱՍՅԷՆ ՈՒՊՈՒՐԿԵՅԷՔ  
eglise58@sourphagop.com-ը

ՀԻՒԱՆԴԱՆԵՐՈՒ ԱՅԵԼՈՒԹԻՒՄ  
Բարեհաճեցէք հեռաձայնել Արժ. Տ.  
Գառնիկ Քինյ. Գոյունեանի.  
514 331 5445 x203 կամ 514 909 5203

ՆԱԽՈՐԴ ԹԻՒԵՐՈՒ ԿՐԱՔ ԳՏԱԵԼ  
[www.sourphagop.org/lradou](http://www.sourphagop.org/lradou)  
ԿԱՅԷԶԻՆ ՎՐԱՅ